

ԿԱՐԳ

«ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման համար կատարված վերահաշվարկների վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ տեղեկատվություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է՝
 - 1) եռամսյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը՝ համաձայն հավելվածի.
 - 2) էլեկտրոնային եղանակով՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ՝ `tech.report@psrc.am` էլեկտրոնային հասցեին և (կամ) ներբեռնվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքի (`psrc.am`) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնում բաժնում (`https://e-services.psrc.am/`).
 - 3) Էքսելիս (XLS) կամ ԷքսելիսԷքս (XLSX) կամ ՕԴԻԷս (ODS) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական ֆոնետիկ յունիկոդ (phonetic unicode) տառատեսակով:
3. Տեղեկատվության ներկայացման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման համար կատարված վերահաշվարկների վերաբերյալ

___ եռամսյակ 20 __ թվական

№	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի տեղամասը	Բնակավայրը	Բաժանորդի			Մեղակառավարի սարքի սպահման արժեքի անորոշում	Վերահաշվարկի վերաբերյալ բաժանորդին տեղեկատվություն ներկայացնելու ամիսը	Առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցումները և գրանցման ամսաթիվը	Վերահաշվարկի հիմքը	Վերահաշվարկի ժամանակահատվածը (օր)	Մատուցված ծառայության				Նշումներ
			անուն ազգանունը (կազմակերպության ղեկավարի անվանումը)	քարտի համարը	հասցեն (կազմակերպության ղեկավարի գործունեության վայրը)						միջին օրական քանակը (մ ³)	քանակի շեղումը (%)	վերահաշվարկված քանակը (մ ³)	վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարը (ՀՀ դրամ)	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1															
2															
3															
4															
5															

1. Աղյուսակի 10-րդ սյունակում նշվում է հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների այն կետը (ենթակետը), որի պահանջի հիման վրա կատարվել է վերահաշվարկ: